Տեղեկանք

Ի կատարումն ՀՀ վարչապետի 17.05.2011թ. N02/23.2/7858-11 հանձնարարականի՝ «Հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններին ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում կատարված փոփոխությունների մասին

1. Հավելվածի 3-րդ կետում՝

1) «դիտվում» բառը փոխարինվել է «*համարվում*» բառով,

2) «Էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվը տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետից հետո ստացողի կողմից վավերացվելու կամ չվավերացվելու դեպքերում՝ ստացողի կողմից դրա վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են և դրանում առանձնացված ԱԱՀ-ի գումարի հաշվանցումը կատարվում է սույն կարգին համապատասխան:» նախադասությունը փոխարինվել է «*Տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետից հետո էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ ստացողի կողմից ներկայացվում են սույն կարգին համապատասխան: Տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետից հետո էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը կատարվում է սույն կարգով սահմանված հաշվետու ժամանակաշրջանում օրենքով սահմանված՝ դեպքերում, կարգով և չափերով:*» նախադասությամբ:

2. Հավելվածի 4-րդ կետում՝

1) «տեղեկությունները» բառը փոխարինվել է «*տեղեկություններ*» բառով,

2) «ժամանակաշրջանի» բառից հետո ավելացվել է «*համար*» բառը:

3. Հավելվածի 5-րդ կետում «Բացառությամբ սույն կարգի 2-րդ կետում նշված հարկային հաշիվների և սույն կարգով սահմանված այլ դեպքերի տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող տեղեկանքում ներառվում են տեղեկություններ.» բառերը փոխարինվել են «*Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող տեղեկանքում ներառվում են տեղեկություններ (բացառությամբ սույն կարգի 2-րդ կետում նշված հարկային հաշիվների և սույն կարգով սահմանված այլ դեպքերի)՝*» բառերով:

4. Հավելվածի 7-րդ կետը՝ «7. ԱԱՀ վճարողները 2009 թվականի հունվարից սկսած, սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում, կարող են կատարել

նախկինում (այդ թվում՝ մինչև 2009 թվականն ընկած ժամանակաշրջաններում) ներկայացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ճշգրտումներ (ներկայացնել ճշգրտված տեղեկություններ), բացառությամբ՝ Օրենքի 29-րդ հոդվածով և Օրենքի 43.1-րդ հոդվածի վերջին պարբերությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ ճշգրտված տեղեկությունները վերաբերվում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված հաշվետու ժամանակաշրջաններին: Տեղեկությունների ճշգրտումներ չեն կարող կատարվել նաև այն դեպքերում, երբ ճշգրտումները վերաբերվում են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.1-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված ժամկետից ավելի վաղ ժամանակաշրջանին և տեղեկությունների ներկայացումը կարող էր հարկային պարտավորությունների նվազեցման կամ հաշվանցվող գումարների ավելացման հարց առաջացնել, եթե օրենքով նման ճշգրտումը արգելված չլիներ:» վերաշարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«7. Սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում, կարող են կատարել նախկինում ներկայացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ճշգրտումներ (ներկայացնել ճշգրտված տեղեկություններ), բացառությամբ՝ Օրենքի 29-րդ հոդվածով և Օրենքի 43.1-րդ հոդվածի վերջին պարբերությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ ճշգրտված տեղեկությունները վերաբերվում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված հաշվետու ժամանակաշրջաններին: Տեղեկությունների ճշգրտումներ չեն կարող կատարվել նաև այն դեպքերում, երբ ճշգրտումները վերաբերվում են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.1-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված ժամկետից ավելի վաղ ժամանակաշրջանին և առաջացնում են այդ ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի ճշգրտման անհրաժեշտություն:» խմբագրությամբ:

5. Հավելվածի 9-րդ կետում՝ «ճշտված» բառը փոխարինվել է «*ճշգրտված*» բառով:

6. Հավելվածի 13-րդ կետում՝ «հաշվի վերաբերյալ տեղեկությունները» բառերը փոխարինվել է «*հաշվում*» բառով:

7. Հավելվածի 15-րդ կետում՝ «Տեղեկանքում՝ դուրս գրված կամ ստացված առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններում սխալներ

ինքնուրույն հայտնաբերելու դեպքերում (բացառությամբ՝ սույն կարգով նախատեսված դեպքերի) ԱԱՀ վճարողը այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնում է ճշտված տեղեկանք, ինչը համարվում է ճշգրտված տեղեկությունների ներկայացում: Ճշտված տեղեկանքում ներառվում են առաջին և երկրորդ մասերում նախկինում ճիշտ ներկայացված և ճշգրտված տեղեկությունները: Ճշտված տեղեկանք կարող է ներկայացվել նաև այն դեպքերում, երբ հարկային մարմնի կողմից անցկացված կամերալ ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվել են սխալներով և ԱԱՀ վճարողին գրավոր տեղեկացվել է դրա մասին:» նախադասությունը փոխարինվել է «*Տեղեկանքում՝ դուրս գրված կամ ստացված առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններում սխալներ ինքնուրույն հայտնաբերելու դեպքերում (բացառությամբ՝ սույն կարգով նախատեսված դեպքերի) ԱԱՀ վճարողը այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնում է ճշգրտված տեղեկանք: Ճշգրտված տեղեկանքում ներառվում են առաջին և երկրորդ մասերում նախկինում ճիշտ ներկայացված և ճշգրտված տեղեկությունները: Ճշգրտված տեղեկանք կարող է ներկայացվել նաև այն դեպքերում, երբ հարկային մարմնի կողմից անցկացված կամերալ ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվել են սխալներով և ԱԱՀ վճարողին գրավոր տեղեկացվել է դրա մասին:*» նախադասություններով:

8. Հավելվածի 17-րդ կետում՝ «և օրենքի համաձայն հաշվանցման ենթակա» բառերը հանվել են:

9. Հավելվածի 18-րդ կետում՝ «Սույն կարգին համապատասխան չներկայացված համարվող» բառերը հանվել են:

10. Հավելվածի 20-րդ կետում «փաստացի մատակարարի անունից գնորդի կողմից դուրս է գրվել հարկային հաշիվը» բառերը փոխարինվել է «*մատակարարի անունից փաստացի դուրս է գրվել հարկային հաշիվը*» բառերով: